

RECEIVED MAY 26 1987

ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՄԷԿ ՄԻԼԻՈՆ ՏՈԼԱՐԻ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԵԱՄԲ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ
ԵՐԿՐՈՐԴ ԱՄՊԻՈՆ ՄԸ ԿԸ ՀԱՍՏԱՏԷ ՄԻՇԻԿԸՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Էնն Արպըրի Միշիկընի համալսարանը մէկ միլիոն տոլարի նուիրատուութիւն մը ստացաւ Ալեք եւ Մարի Մանուկեան չիմնարկութեան՝ երկրորդ հայագիտական ամպիոն մը հիմնելու նպատակով:

Տիար Մանուկեան 1981-ին համալսարանին մէջ հաստատեց արդի հայոց պատմութեան ամպիոն մը որուն ղսախօս նշանակուեցաւ Փրոֆ. Ռանըլտ Գրիգոր Սիւնի:

Երկրորդ ամպիոնը պիտի սահմանուի արդի հայ գրականութեան եւ հայ լեզուին: Սոյն ամպիոնի հաստատման առիթով բարերար Ալեք Մանուկեան յայտարարեց. «Ուրախ եմ որ կարողացած եմ օժանդակել Միշիկընի համալսարանի հայագիտական ուսմանց բացառիկ ծրագրին, որուն նուիրուած գիտնականները կենսական գործ մը կը կատարեն՝ տարածելով հայ մշակոյթն ու պատմութիւնը եւ յաւերժացնելով անոնց հասկացողութեան եւ իւրացման աշխատանքները»:

Իսկ իր կարգին համալսարանի նախագահը՝ Տոքթ. Հերըլտ Շափիրօ յայտարարեց. «Մենք բախտաւոր ենք որ Տիար Ալեք Մանուկեանը ունինք իբրեւ բարերար ու բարեկամ Միշիկընի համալսարանին: Ենորհիւ անոր օժանդակութեան Միշիկընի համալսարանը դարձած է հայ մշակոյթի եւ պատմութեան ուսումնասիրութեան գլխաւոր կեդրոններէն մէկը ամբողջ Ամերիկայի մէջ»:

Իր կարգին համալսարանի Գրականութեան, Գիտութեան եւ Արուեստից բաժանմունքին ուսումնասէտը՝ Տոքթ. Փիթըր Օ. Սթայնըր աւելցուց. «Երնորհիւ այս նոր ամպիոնին՝ համալսարանը ի վիճակի պիտի ըլլայ հայ լեզուի, գրականութեան ու մշակոյթի պատմութեան մէջ նոր դասընթացներ աւելցնել իր ուսումնական ծրագրին մէջ»:

Նոր ամպիոնը մաս պիտի կազմէ սլաւոնական լեզուներու եւ գրականութեանց բաժանմունքին:

Համալսարանը հայ լեզուի դասընթացքներ հաստատած էր 1978-էն ի վեր, Մանուկեան չիմնարկութեան օժանդակութեամբ: Համալսարանը նոյնպէս դասընթացքներ ընծայած էր Իետեւեալ նիւթերուն մէջ. «Արդի հայ գրականութիւն», «Հայկական վերածնունդի ծագումը», եւ «Հայաստան եւ հայեր 19-րդ եւ 20-րդ դարերուն»:

Տիար Մանուկեանի մէկ միլիոն տոլարի նուէրը մաս կը կազմէ հայոց

մալսարանի 160 միլիոն տոլարի հանգանակութեան արշաւին, որուն նպատակն է նոր շինութիւններ իրագործել եւ նոր ամպիոններ հաստատել:

Տիար Մանուկեան հիմնադիրն ու պատուակալ տնօրէնն է ՄԱՍԶՕ ընկերութեան, որուն կեդրոնը կը գտնուի Միշիկընի Թէյլըր քաղաքին մէջ եւ որ կ'արտադրէ բնակարանային սարքեր եւ ինքնաշարժներու մասեր:

Տէր եւ Տիկ. Մանուկեաններ երկար տարիներէ ի վեր կը սատարեն աշխարհի տարբեր երկիրներու բարեսիրական, կրթական ու մշակութային ծրագիրներուն: 1953-էն ի վեր Տիար Մանուկեան կը ծառայէ իբրեւ նախագահը Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան որուն նպատակն է սատարել հայութեան ինքնութեան պահպանումին:

- - -